ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՈՐՈՇՈՒՄ

Արձանագրություն թիվ 3

06.10.2020թ.

1. 2019-2020 ուսումնական տարվա քննաշրջանի ամփոփման և վարձավճարների պարտքերի վերաբերյալ.

1.1. Հաշվի առնելով Արցախի Հանրապետությունում ընթացող պատերազմը, Հայաստանում հայտարարված ռազմական դրությունը, 2019-2020 ուս. տարվա առարկայական պարտքերի հանձնման վերջնաժամկետ սահմանել ս.թ. հոկտեմբերի 26-ը:

1.2. 2019-2020 ուս. տարվա վարձավճարի պարտքեր ունեցող ուսանողների համար ուսման վարձավճարների մարման վերջնաժամկետ սահմանել ս.թ. նոյեմբերի 15-ը (պարտավորագրերով):

1.3. Հանձնարարել դեկաններին ուսումնասիրել առարկայական պարտքեր ունեցող յուրաքանչյուր ուսանողի հարցը, կատարել ճշտումներ զինվորական կոմիսարիատների հետ, պարզել ռազմաճակատում գտնվող, ուսումը շարունակելու ցանկություն չունեցող, հեռացման ենթակա ուսանողների տվյալները և ռեկտորատի քննարկմանը ներկայացնել միայն բանակ զորակոչված կամ կամավորագրված ուսանողների հարցը:

1.4. 2020թ. սեպտեմբերի 27-ից Արցախյան պատերազմի մասնակից ՀԱԱՀ ուսանողներին (առաջնագծից վերադառնալուց և համապատասխան փաստաթղթերի ներկայացումից հետո) թույլատրել մասնակցելու 2019-2020 ուս. տարվա առարկայական պարտքերի քննությունների և ստուգարքներին՝ առանց լրացուցիչ դասընթացների և կրեդիտային վճարումների:

1.5. Ագրոնոմիական ֆակուլտետի ուսման վարձավճարի պարտքեր ունեցող ուսանողների փոխադրման հրամանագրումը կատարել միայն վարձավճարի պարտքերի մարումից հետո:

1.6. Հեռակա ուսուցման դեպարտամենտի քննաշրջանի կազմակերպման հարցը լրացուցիչ քննարկել ս.թ. հոկտեմբերի 8-ին և կայացնել համապատասխան որոշում:

2. 2020/2021 ուսումնական տարում բակալավրի ու անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրի բարձրագույն ուսումնական հաստատությունների անվճար ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թվի տասը տոկոսի չափով ԲՈՒՀ-ի միջոցների հաշվին ուսման վարձավճարի փոխհատուցման ենթակա մասնագիտությունների և ուսանողների հարցի վերաբերյալ վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց 2020/2021 ուսումնական տարում ՀԱԱՀ վճարովի համակարգ ընդունված առավել բարձր միավորներ ունեցող ներքոհիշյալ

հինգ ուսանողների ուսման վարձավճարները 100%-ով փոխհատուցել համալսարանի միջոցների հաշվին.

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Մասնագիտություն, կուրս
1	Բաբայան Արմեն Զարգանդի	Ագրոնոմիա մասնագիտ., Ջերմատնային ագրոտեխնոլոգիա կրթական ծրագիր - 1
2	Դարբինյան Արմեն Էդուարդի	Պարենամթերքի տեխն. մասնագիտ., Խմորման արտադրութ. տեխնոլ. և գինեգործ. կրթ. ծրագիր - 1
3	Պետրոսյան Մարկ Մանուկի	Անասնաբուժություն մասնագիտ., Անասնաբուժություն կրթ. ծրագիր - 1
4	Գալստյան Գագիկ Սմբատի	Ագրոբիզնես մասնագիտ., Ագրոբիզնես և ֆինանսներ կրթական ծրագիր - 1

3. Պետության կողմից (պետության միջոցների հաշվին) սահմանված տարբեր կատեգորիաներով, ՀԱԱՀ ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցման վերաբերյալ.

<u>3.1. Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի</u> 2020-2021 ուստարվա վճարովի համակարգի ՀՀ Կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն որոշմամբ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների ներքոհիշյալ ուսանողի և մագիստրանտի համար 2019-2020 ուստարում սահմանել ուսման վարձի զեղչ 30% չափով.

Հ/հ	*Ազգանուն, անուն, հայրանուն*	*Մասնագ., կուրս*	*Ուսման վարձը (դրամ)*	*Մասնակի փոխհ. չափը (դրամ)*
1	Ղալեչյան Կարեն Արմենի	ԷԼ-2	400000	120000
2	Օհանյան Աշոտ Արամի	ՃԵԿ-2 մագ. հեռակա	195000	58500

<u>3.2. Ագրարային ճարտարագիտության ֆակուլտետի</u> 2020-2021 ուստարվա վճարովի համակարգի ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից սահմանված ուսանողի ՄՈԳ-ի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված «Շինարարություն» մասնագիտության «Հողաբարելավում, հողային և ջրային պաշարների օգտագործում, հիդրոտեխնիկական կառուցվածքներ» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանող ***Արթուր Գրիգորի Գրիգորյանի*** 2019-2020 ուստարվա ուսման վարձը փոխհատուցել 50%-ով:

<u>3.3. Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի</u> առկա ուսուցման 2020/21 ուստարվա վճարովի համակարգի ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն որոշմամբ սոցիալական աջակցություն ստացող սահամանամերձ համայնքների ներքոհիշյալ ուսանողներին տրամադրել պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցում 2019-2020 ուստարվա համար 30% չափով.

Հ/հ	*Ազգանուն, անուն, հայրանուն*	*Մասնագ., կուրս*	*Ուսման վարձը (դրամ)*	*Մասնակի փոխհատ. չափը (դրամ)*
1	Միրզախանյան Գեղամ Գագիկի	ԱԷԿ-5	450.000	135.000
2	Սարգսյան Արտյոմ Մարտիկի	ԱՔԽՏ-2	550.000	165.000

<u>3.4. Ագրոբիզնեսի և տնտեսագիտության ֆակուլտետի</u> առկա ուսուցման 2020-2021 ուստարվա վճարովի համակարգի «Ագրոէկոնոմիկա» մասնագիտության «Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա» կրթական ծրագրի 5-րդ կուրսի ուսանող ***Լիանա Գրիգորի Անտոնյանին*** տրամադրել պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցում 2019-20 ուստարվա համար 50% չափով (250.000 դրամ):

<u>3.5. Ագրոբիզնեսի դեպարտամենտի</u> «Ագրոբիզնես» մասնագիտության «Ագրոբիզնես» կրթական ծրագրի առկա ուսուցման 2020-2021 ուստարվա 2-րդ կուրսի վճարովի համակարգի ՀՀ կառավարության 2014թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն որոշմամբ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքի ներքոհիշյալ մագիստրանտ՝ Իննա Ավետիկի Բաղիրյանին տրամադրել պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցում 30%-ի չափով 2019-2020 ուստարվա համար

<u>3.6. Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի</u> 2019-2020 ուստարվա համար փոխհատուցված, վճարովի համակարգի ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված ուսանողի ՄՈԳ-ի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված Պարենամթերքի տեխնոլոգիա մասնագիտության «Կաթի, կաթնամթերքի, մանկական և ֆունկցիոնալ սննդի տեխնոլոգիա» կրթական ծրագրի վճարովի համակարգի 1-ին կուրսի ուսանողուհի ***Անժելա Հմայակի Նահապետյանի*** համար սահմանել 460,000 դրամ տարեկան ուսման վարձավճարի զեղչ 50%-ի չափով (230,000 դրամ):

<u>3.7.</u> ՀՀ Կառավարության 2014թ-ի դեկտեմբերի 18-ի թիվ 1444-Ն որոշմամբ սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների, ***<u>Ագրոնոմիական ֆակուլտետի</u>*** 2020/2021 ուստարվա վճարովի համակարգի, ներքոհիշյալ ուսանողների ուսման վարձը 2019/2020 ուստարվա համար զեղչել 30%-ի չափերով.

Հ/հ	*Ազգանուն, անուն, հայրանուն*	*Մասնագ., կուրս*	*Ուսման վարձը (դրամ)*	*Մասնակի փոխհատ. չափը (դրամ)*
1	Աբրահամյան Սնակ Հրաչիկի	ՊԳՏ-3	400.000	120.000
2	Ջաղինյան Վահե Վարուժանի	ԱԷ-3	400.000	120.000

<u>3.8. Հեռակա ուսուցման դեպարտամենտի</u> 2019-2020 ուստարվա ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված ուսանողի ՄՈԳ-ի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների ներքոհիշյալ ուսանողների վարձավճարները համարել պետության կողմից մասնակի փոխհատուցված՝ ռեկտորատի որոշմամբ:

Հ/հ	*Ազգանուն, անուն, հայրանուն*	*Մասնագ., կուրս*	*Կրթական ծրագիր*	*Տարեկ. ուս. վարձ (դր.)*	*Զեղչի %*
1	Նավասարդյան Սամվել Ռուբենի	Պարենամ. տեխն. - 1	Խմորմ. արտ. տեխն. և գինեգ.	380.000	60
2	Խաչատրյան Շիրազ Արայիկի	Շինարար. - 1	Հողաշ., հող. կադաստր	400.000	60

3	Կիրակոսյան Հայկուշ Սամվելի	Պարենամ. տեխն. - 1	Խմորմ. արտ. տեխն. և գինեգ.	380.000	50
4	Բարսեղյան Օվսաննա Արծրունի	Անտառ. տնտես. - 1	Անտառ. տնտ. և բնակ. կան.	360.000	50
5	Մարդյան Հարություն Միհրի	Անասնա-բուժ. - 4	Անասնաբուժ. սան. Փորձաք.	300.000	60
6	Գևորգյան Գեիմ Արմենի	Շինարար. - 1	Հողաբ., հող. և ջր. պաշարների օգտագործում, հիդրոտ. կառ.	360.000	70
7	Ստեփանյան Աշոտ Տիգրանի	Շինարար. - 1		360.000	70
8	Անտոնյան Լիանա Անդրանիկի	Պարենամ. տեխն. - 1	Կաթի, կանթն., մանկ. և ֆունկ. սննդի տեխն.	380.000	50
9	Խուդոյան Անատոլի Վալերիի	Պարենամ. տեխն. - 1	Խմորմ. արտ. տեխն. և գինեգ.	380.000	60
10	Արոյան Արտաշ Արամի	Պարենամ. տեխն. - 1	Խմորմ. արտ. տեխն. և գինեգ.	380.000	50
11	Խաչատրյան Ստելլա Աղասու	Ագրոնո-միա – 1	Ագրոնոմիա, սելեկց. և գեն.	360.000	60

<u>3.9. ՀԱԱՀ Միսիանի մասնաճյուղի հեռակա ուսուցման</u> «Ագրոնոմիա» մասնագիտության «Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա» կրթական ծրագրի 2019-2020 ուստարվա առաջին կուրսի ուսանող ***Գոհար Համլետի Մարգարյանի*** 2019-2020 ուստարվա ուսման վարձը ենթակա է փոխհատուցման պետության կողմից՝ հիսուն տոկոսի չափով (մեկ հարյուր վաթսունհինգ հազար ՀՀ դրամ):

4. 2020-2021 ուս. տարում ՀԱԱՀ մագիստրատուրա ընդունված ուսանողների հրամանագրման և ուսման վարձավճարների հավաքագրման հարցի վերաբերյալ.

Մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողների ուսման վարձավճարների հավաքագրման վերջնաժամկետ սահմանել ս.թ. հոկտեմբերի 31-ը, այնուհետև ձևակերպել հրամանները:

5. Մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողների հրամանագրման ու պրակտիկայի ձևակերպման հարցի վերաբերյալ.

Մագիստրանտների հրամանագրումը և պրակտիկաների ձևակերպումները կատարել 2 շաբաթ ուշացումով:

6. ՀԱԱՀ ասպիրանտների դասընթացների կազմակերպման և ուս. պլանների (հին կամ նոր) ընտրության հարցի վերաբերյալ.

Հանձնարարել դեկաններին՝ մինչև հոկտեմբերի 9-ը ներկայացնել հետազոտողի աստիճանի ուսումնական նոր պլանների նախագծերը. աշխատանքի համակարգող՝ ՈԳԱ կենտրոնի տնօրեն Մ. Մովսիսյան:

7. Օտար լեզու առարկայի (գերմաներեն, ֆրանսերեն) դասընթացների ուսումնասիրման հարցով պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի

ուսանողներ՝ Արմեն Արամի Հովհաննեսյանի և Տարոն Համլետի Մկրտչյանի կողմից ներկայացված դիմումների վերաբերյալ.

Պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի ուսանողներ Արմեն Արամի Հովհաննեսյանին (Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն մասնագիտություն, 1-ին կուրս) և Տարոն Համլետի Մկրտչյանին (Պարենամթերքի տեխնոլոգիա մասնագիտություն, 1-ին կուրս) ընձեռել հնարավորություն՝ ուսումնառելու օտար լեզու (համապատասխանաբար՝ գերմաներեն և ֆրանսերեն լեզուներ) առարկաները և կրեդիտներ հավաքել 2020/2021 ուս. տարվա երկրորդ կիսամյակում:

8. 2016թ ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ մարտական գործողության մասնակից (19 ուսանող) կամ մարտական հերթապահություն իրականացրած (13 ուսանող) ՀՈՒԴ ուսանողների ուսման վարձավճարների զեղչերի սահմանման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց.

8.1. Հեռակա ուսուցման դեպարտամենտի վճարովի համակարգի քառօրյա պատերազմի ժամանակ մարտական հերթապահություն իրականացրած 2019-2020 ուստարվա ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել տարեկան ուսման վարձի զեղչ 30%-ի չափով.

Հ/հ	*Ազգանուն, անուն, հայրանուն*	*Մասնագիտ., կուրս*	*Տարեկ. ուսմ. վարձ (դրամ)*	*Զեղչի չափը (դրամ)*
1	Եղիազարյան Մկրտիչ Տարոնի	Ագրոպ. համակարգի ֆինանս. կառավար. - 5	400.000	120.0
2	Բաղդիշյան Հայկ Կարապետի	Գյուղ. արտադր. մեք. մեքենաներ և սարք. - 4	260.000	78.0
3	Դարբինյան Պավել Զարմարի	Գյուղ. արտադր. մեք. մեքենաներ և սարք. - 3	330.000	99.0
4	Հայրապետյան Արթուր Ալբերտի	Գյուղատնտեսության մեքենայացում - 5	280.000	84.0
5	Մամյան Արեն Վրեժի	Գյուղ. արտադր. մեք. մեքենաներ և սարք. - 3	330.000	99.0
6	Թովմասյան Արայիկ Թաթուլի	Տրանսպորտային համակարգեր - 3	400.000	120.0
7	Առաքելյան Արտյոմ Երվանդի	Տրանսպորտային համակարգեր - 3	400.000	120.0
8	Սարգսյան Ռոմիկ Լորիսի	Տրանսպորտային համակարգեր - 3	350.000	105.0
9	Բաբաջանյան Արտյոմ Հրաչյայի	Փոխադ. և ճան. երթև. կազմ. և կառավար. - 5	350.0	105.0
10	Մարտիրոսյան Գրիգոր Մելիքի	Պարենամթերքի տեխնոլոգիա - 2	340.000	102.000
11	Մանուկյան Գոռ Գևորգի	Շինարարություն - 4	280.000	84.000
12	Դալիջունց Վազգեն Կամոյի	Սննդարդ. էկոնոմիկա և կառավարում - 5	300.000	90.000
13	Եղոյան Գուրգեն Սերյոժայի	Սննդարդ. էկոնոմիկա և կառավարում - 5	300.000	90.000

8.2. Հեռակա ուսուցման դեպարտամենտի վճարովի համակարգի քառօրյա պատերազմի ժամանակ մարտական գործողության մասնակից 2019-2020 ուստարվա ներքոհիշյալ ուսանողների համար սահմանել տարեկան ուսման վարձի զեղչ 50%-ի չափով:

Հ/հ	*Ազգանուն, անուն, հայրանուն*	*Մասնագիտ., կուրս*	*Տարեկ. ուսմ. վարձ (դրամ)*	*Զեղչի չափը (դրամ)*
1	Վանոյան Գրիգոր Հայկի	Շինարարություն - 4	325.000	162.500
2	Գիշյան Արտյոմ Ավետիքի	Հողշինարարություն և հողային կադաստր - 5	250.000	125.000
3	Մկրտչյան Արման Սուրենի	Գյուղ. արտադր. մեքենայ., մեքեն. և սարքավոր. - 3	330.000	165.000
4	Սահակյան Ազատ Գրիգորի	Գյուղ. արտադր. մեքենայ., մեքեն. և սարքավոր. - 4	260.000	130.000
5	Անտոնյան Ժակ Անտոնի	Տրանսպորտ. համակ. - 4	400.000	200.000
6	Սարդարյան Արմեն Արթուրի	Տրանսպորտային համակարգեր - 4	400.000	200.000
7	Ավագյան Գոռ Վարդանի	Փոխադր. և ճանապ. երթ. կազմակերպ. և կառավ. - 5	270.000	135.000
8	Մարտիկյան Մաքսիմ Լյովայի	Շինարարություն - 3	330.000	165.000
9	Հարությունյան Արա Նվերի	Ագրոնոմիա - 4	330.000	165.000
10	Ավետիսյան Արմեն Սլավիկի	Պարենամթերքի տեխնոլոգիա - 3	340.000	170.000
11	Դանիելյան Սարգիս Աշոտի	Պարենամթերքի տեխնոլոգիա - 2	340.000	170.000
12	Հակոբյան Սեյրան Հայկոյի	Անտառ. տնտես. և բնակ. կանաչապատում - 5	200.000	100.000
13	Չամիչյան Պարգև Հակոբի	Պարենամթերքի տեխնոլոգիա - 2	340.000	170.000
14	Սիմոնյան Էդգար Հրանտի	Պարենամթերքի տեխնոլոգիա - 3	340.000	170.000
15	Բաբայան Պարույր Արսենի	Հաշվապահական հաշվառ. և հարկում - 3	440.000	220.000
16	Մալաջալյան Հովհաննես Ջորջի	Ագրոբիզնես - 4	400.000	200.000
17	Մարգարյան Տիգրան Վարդանի	Ագրոպար. համակարգի ֆինանսների կառավար.- 5	300.000	150.000
18	Եմիշյան Աշոտ Անդրանիկի	Ագրոպար. համակարգի ֆինանսների կառավար.- 5	300.000	150.000
19	Զալինյան Վանիկ Կարենի	Ագրարային արտադր. էկոնոմիկա և կառավար.- 5	300.000	150.000

9. 2017-2018 ուս. տարվա ՀՈՒԴ 1-ին կուրսից բանակ զորակոչված (համապատասխան փաստաթղթերի բացակայության պայմաններում տրված են հեռացման հրամաններ) և ներկայումս զորացրված, առաջին կուրսի ծրագիրը չկատարած ուսանողների՝ Նարեկ Ակսելի Հայրապետյանի (Ագրոբիզնես 1-ին կուրս) և Յուրա Կամոյի Մահտեսյանի (Ագրարային արտադրության և սննդարդյունաբերության էկոնոմիկա 1-ին կուրս), Արման Արմենի Գրիգորյանի (Կենսագործունեութ.

անվտանգություն 1-ին կուրս) ուսանողական իրավունքների վերականգնման հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց.

9.1. Հեռակա ուսուցման դեպարտամենտի «Կենսագործունեության անվտանգություն» մասնագիտության «Կենսագործունեության անվտանգություն» կրթական ծրագրի 2017-2018 ուստարվա առաջին կուրսի նախկին ուսանող՝ Արման Արմենի Գրիգորյանի (ով մեկնել է զինվորական ծառայության, սակայն փաստաթուղթ չի ներկայացրել) ուսանողական իրավունքները վերականգնել հեռակա ուսուցման դեպարտամենտի «Կենսագործունեության անվտանգություն» մասնագիտության «Կենսագործունեության անվտանգություն» կրթական ծրագրի 2019-2020 ուստարվա առաջին կուրսի կազմում երկրորդ կիսամյակից:

9.2. Հեռակա ուսուցման դեպարտամենտի «Ագրոէկոնոմիկա» մասնագիտության «Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա» կրթական ծրագրի 2017-2018 ուստարվա առաջին կուրսի նախկին ուսանող՝ Յուրա Կամոյի Մահտեսյանի (ով մեկնել է զինվորական ծառայության, սակայն փաստաթուղթ չի ներկայացել) ուսանողական իրավունքները վերականգնել հեռակա ուսուցման դեպարտամենտի «Ագրոէկոնոմիկա» մասնագիտության «Ագրոէկոնոմիկա և սննդարդյունաբերության էկոնոմիկա» կրթական ծրագրի 2019-2020 ուստարվա առաջին կուրսի կազմում:

9.3. Հեռակա ուսուցման դեպարտամենտի «Ագրոբիզնես» մասնագիտության «Ագրոբիզնես» կրթական ծրագրի 2017-2018 ուստարվա առաջին կուրսի նախկին ուսանող՝ Նարեկ Ակսելի Հայրապետյանի (ով մեկնել է զինվորական ծառայության, սակայն փաստաթուղթ չի ներկայացել) ուսանողական իրավունքները վերականգնել հեռակա ուսուցման դեպարտամենտի «Ագրոբիզնես» մասնագիտության «Ագրոբիզնես» կրթական ծրագրի 2019-2020 ուստարվա առաջին կուրսի կազմում:

10. ՀԱԱՀ տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների համահայկական դրամահավաքին միանալու և «Հայաստան» համահայկական հիմնադրամի հաշվեհամարին գումարի փոխանցման առաջարկության հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը, լսելով Հիմնադրամի ստորաբաժանումների ղեկավարների, ուսումնական, գիտական և տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտորների, ինչպես նաև ռեկտոր Վ. ՈՒռուտյանի կողմից ներկայացված այն իրողությունը, որ ՀԱԱՀ հիմնադրամի աշխատակիցները պատրաստակամություն են հայտնել միանալ դրամահավաքին և խնդրել են իրենց սեպտեմբեր ամսվա աշխատավարձի (դրան հավասարեցված բոլոր վճարումների) 1%-ը նվիրաբերել «Հայաստան» համահայկական հիմնադրամի հաշվեհամարին, արձանագրեց Հիմնադրամի աշխատողների պատրաստակամությունը և որոշեց, որ ի կատարումն ՀԱԱՀ հիմնադրամի աշխատակիցների խնդրանքի, անհրաժեշտ է ապահովել «Հայաստան» համահայկական հիմնադրամի հաշվեհամարին ՀԱԱՀ աշխատակիցների սեպտեմբեր ամսվա աշխատավարձի (դրան հավասարեցված բոլոր վճարումների) 1%-ի չափով փոխանցումը:

11. Նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության համաճարակային իրավիճակի ներկա պայմաններում համալսարանի տարածքում ՀԱԱՀ աշխատակիցների և ուսանողության կողմից հակահամաճարակային կանոնների խստիվ պահպանման անհրաժեշտության հարցի վերաբերյալ.

Հանձնարարել դեկանների և ամբիոնի վարիչներին.

1. համալսարանի աշխատակիցների և ուսանողների շրջանում տանել բացատրական աշխատանքներ, սահմանել հերթապահության գրաֆիկներ և միջանցքներում խստորեն վերահսկել հակահամաճարակային կանոնների պահպանումը՝ պահակային ծառայության և բժշկի հետ համագործակցելով,

2. հոկտեմբերի 7-ին ուսումնական գործընթացի կառավարման վարչություն ներկայացնել համալսարանի տարածքների վերահսկման պատասխանատուներին և հերթապահության գրաֆիկները:

12. Արցախի հանրապետությունում ընթացող պատերազմի և ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարելու պայմաններում զորակոչված կամ կամավորագրված դիմորդների կողմից ՀՈՒԴ ընդունելության համար դիմումների ներկայացման և քննություններին մասնակցության խնդրի վերաբերյալ.

12.1. Ընդունել ի գիտություն:

12.2. Հանձնարարել ՈՒԳԿ վարչությունը ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարելու պայմաններում բանակ զորակոչված կամ կամավորագրված ՀԱԱՀ ՀՈՒԴ դիմորդների համար կազմակերպել լրացուցիչ ընդունելության քննություններ:

13. Ռազմական դրության պայմաններում ներկայումս ՀՀ-ում գտնվող ԱՀ Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ուսանողների ուսումնական գործընթացի կազմակերպման հարցի վերաբերյալ.

13.1. Ընդունել ի գիտություն:

13.2. Հանձնարարել ՈՒԳԿ վարչությունը՝ ուսումնական գործընթացում ներգրավվելու ցանկության դեպքում ՇՏՀ ուսանողներին ամրագրել համապատասխան կուրսերին կամ դասընթացներին:

14. Պատերազմական իրավիճակում ԱՀ բեռնափոխադրումների և բեռների բաշխման գործընթացի համակարգման նպատակով ՀԱԱՀ աշխատակիցներից կազմված կամավորական ջոկատի անձնակազմի փոխարինման անհրաժեշտության վերաբերյալ վերաբերյալ.

Հանձնարարել բոլոր ստորաբաժանումների ղեկավարներին՝ դեպի ԱՀ բեռ-նափոխադրումների և բեռների բաշխման գործընթացի համակարգման նպատակով կազմել ՀԱԱՀ աշխատակիցների կամավորական ևս մեկ ջոկատ:

15. ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության պայմաններում ՀԱԱՀ մասնաշենքերի, ստորաբաժանումների, մասնաճյուղերի տարածքներում ապաստարանների նախապատրաստման հարցի վերաբերյալ.

15.1. Հանձնարարել տնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր Հ. Զաքոյանին, ՏՏ կենտրոնի տնօրեն Վ. Մելքոնյանին, ստորաբաժանումների ղեկավարներին, մասնաճյուղերի, քոլեջների ԳԿ-րի տնօրեններին, հանրակացարանի պարետին.

- համալսարանի նկուղային և կիսանկուղային հարկերը սեղմ ժամկետում մաքրել, ապահովել անհրաժեշտ պայմաններ (լույս, հեռախոսագիծ, ինտերնետ կապ և այլն):

- համալսարանի մասնաշենքերում, ստորաբաժանումներում ապահովել անհրաժեշտ ուղեցույցներ, ցուցանակներ, ինչպես նաև ստորաբաժանումների ղեկավարներին, աշխատակիցներին և ուսանողությանը տեղեկացնել հարակից տարածքների ամենամոտ հնարավոր ապաստարանների վերաբերյալ:

15.2. ՀԱԱՀ տարբեր ստորաբաժանումների ապաստարանների վայրերը ֆիքսել քաղպաշտպանության պլանում:

16. Պատերազմական իրավիճակում աշխատակիցների և ուսանողության բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավման անհրաժեշտության վերաբերյալ.

16.1. Ընդունել ի գիտություն:

16.2. Հանձնարարել տորաբաժանումների ղեկավարներին իրականացնել հանդիպումներ, զրույցներ համալսարանի աշխատակիցների, ուսանողների հետ, բարձր պահել հայրենասիրական ու մարտական ոգին և հավատը հաղթանակի հանդեպ:

17. «Ագրոբիզնես և սննդի արդյունաբերության կառավարում» կրթական ծրագրի վճարովի համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհի Գալինա Աշոտի Հովհաննիսյանին ՀԱԱՀ Ագրոբիզնեսի դեպարտամենտում ուսումը շարունակելու թույլտվություն տալու հարցի վերաբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց «Ագրոբիզնես և սննդի արդյունաբերության կառավարում» կրթական ծրագրի վճարովի համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհի Գալինա Աշոտի Հովհաննիսյանին, կրեդիտները ներկայացնելու դեպքում թույլատրել ուսումը շարունակել ՀԱԱՀ Ագրոբիզնեսի դեպարտամենտում և մինչև 2021թ-ի փետրվարի 23-ը ընկած ժամանակահատվածում հանձնել առաջացած առարկայական տարբերությունները:

18. Համալսարանից հեռացված և ուսանողական իրավունքները վերականգնելու ցանկություն հայտնող ուսանողների նախորդ տարիների պարտքերի չեղարկման, ինչպես նաև հաշվա¬պահության կողմից դրվող չեզոք վիզաների հարցի վերբերյալ.

ՀԱԱՀ ռեկտորատը միաձայն որոշեց.

18.1. ՀԱԱՀ-ից նախկինում հեռացված ուսանողների (քննարկվող խմբի)՝ ուսանողական իրավունքները վերականգնելիս, նախորդ տարիներին չվճարված ուսման վարձի գումարները չպահանջել՝ հնարավորություն տալով ուսումնառությունը շարունակել վերականգնման պահին գործող վարձավճարների չափով, սահմանված կարգով, վճարումներն անելու պայմանով:

18.2. ՈՒսանողական իրավունքների վերականգնման համար ներկայացված, հաշվապահության կողմից բացասական վիզաներով դիմումների հարցը լրացուցիչ քննարկել ռեկտորատի նիստում:

ՌԵԿՏՈՐԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ.Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.Վ. ԱՎԱԳՅԱՆ